ЭКОНОМИКА

ՀՀ կենսաթոշակառուների թվաքանակի և կենսաթոշակների միջին չափի վերլուծություն

Ասլանյան Գ. Ս.
ՀՊՏՀ, տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի մագիստրանտ (Հայաստան, Երևան)
gevorkaslanyan@yandex.ru

Վճռորոշ բառեր՝ կենսաթոշակառու, միջին կենսաթոշակ, աշխատանքային կենսաթոշակ, զզինվորական կենսաթոշակ, սեռատարիքային կազմ

Анализ численности пенсионеров и среднего размера пенсий в Республике Армения

Асланян Г. С.
АГЭУ, магистр кафедры экономико-математических методов (Ереван, Армения)
gevorkaslanyan@yandex.ru

Резюме: Важнейшим социально-экономическим показателем для каждого государства является уровень пенсий и число пенсионеров. Чем выше пенсии, тем выше уровень благосостояния в этой стране. В этой статье сначала рассматривается количество пенсионеров в Республике Армения по типам пенсий, регионам, полу и возрастному составу. Затем указываются причины, приведшие к изменению численности пенсионеров, анализируются изменения среднего размера различных типов пенсий за последние годы, а также рассматриваются законодательные изменения, которые в дальнейшем повлияют на размер пенсий.
Ключевые слова: пенсионер, средняя пенсия, рабочая пенсия, военная пенсия, возрастной и половой состав

Analysis of the number of pensioners and the average size of pensions in Republic of Armenia

Aslanyan G. S.
ASUE, Master at the Chair of Mathematical Methods in Economics (Yerevan, Armenia)
gevorkaslanyan@yandex.ru

Abstract: The level of pensions and the number of pensioners are among the most important social and economic indicators for each country. The higher the pension is, the higher the level of welfare in the country is. Initially, the number of pensioners of the RA by types of pensions, by regions, by sex and and age composition has been studied in this article. The reasons leading to the changes in the number of pensioners have been presented as well. Subsequently, the changes in the average size among various types of pensions in recent years have been analysed, as well as the legislative amendments have been presented that will affect the size of pensions.
Keywords: pensioner, average pension, working pension, military pension, sex and age composition

Յուրաքանչյուր պետության համար կարևորագույն սոցիալ-տնտեսական ցուցանիշներից են կենսաթոշակների մակարդակը և կենսաթոշակառուների թվաքանակը: Որքան բարձր է կենսաթոշակների չափը, այնքան ավելի բարձր է տվյալ պետությունում բարեկեցության մակարդակը: Սույն հոդվածում ուսումնասիրվել է ՀՀ կենսաթոշակների միջին չափի և կենսաթոշակառուների թվաքանակի կառուցվածքի դինամիկան վերջին տարիներին: Կատարված վերլուծության համար հիմք է հանդիսացել հիմնականում ՀՀ ՎԿ-ի կողմից ներկայացվող պաշտոնական վիճակագրությունը (ուսումնասիրվել են տարեվերջի տվյալները, բացառությամբ 2019թ., որի դեպքում վերցվել է հուլիսի 1-ի սկզբի տվյալները):

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով սահմանված պայմանները բավարարելու դեպքում կենսաթոշակի իրավունք ունեն Հայաստանի Հանրապետության քաղաքացին, օտարերկրյա քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձը, եթե սույն օրենքով այլ բան սահմանված չէ [**4**, հոդված 7]:

Օտարերկրյա քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձը կենսաթոշակի և կենսաթոշակ ստանալու իրավունք ունի Հայաստանի Հանրապետությունում բնակվելու իրավունք ունենալու ժամանակահատվածում:

Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ չունեցող օտարերկրյա քաղաքացին կենսաթոշակի իրավունք ունի, եթե նա կենսաթոշակ չի ստանում այն պետությունից, որի քաղաքացին է:

Հայաստանի Հանրապետության երկքաղաքացին կենսաթոշակի իրավունք ունի, եթե նա մշտապես կամ առավելապես բնակվում է Հայաստանի Հանրապետությունում (Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում հաշվառված է Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեով) և կենսաթոշակ չի ստանում այլ պետությունից:

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով առանձնացվում են կենսաթոշակի հետևյալ հիմնական տեսակները, որոնք էլ իրենց հերթին ունեն իրենց ենթատեսակները [**4**, հոդված 8] `

- Աշխատանքային
- Զինվորական
- Սոցիալական

2019թ. հուլիսի 1-ի դրությամբ կենսաթոշակառուների ընդհանուր թիվը կազմել է 465.159 մարդ, որը 11 տոկոսով ավելի քիչ է քան 2008թ.: 2019թ. կին կենսաթոշակառուները ընդհանուրի մեջ կազմել են մոտ 60.6 տոկոս, իսկ 2014թ. այն կազմել է 61.1 տոկոս և վերջին տարիներին այն շարունակական նվազում է (տե՛ս աղյուսակ 1): Կենսաթոշակառուների մեջ մոտ 99 տոկոսը աշխատանքային կենսաթոշակառուներն են: 2019թ. զինծառայության հետ կապված կենսաթոշակառուների թիվը 2014թ. նկատմամբ նվազել է մոտ 60 տոկոսով, իսկ 2008թ. նկատմամբ 5.75 անգամ: Այս նվազման հիմնական պատճառներից մեկը այն է, որ այս խմբի մեջ էին մտնում նաև հայրենական պատերազմի հաշմանդամները և նրանց հավասերացված անձիք, և եթե հաշվի առնենք, որ հայրենական պատերազմի մասնակիցները այլևս 90 տարեկանից մեծ են, ուստի բնական է դառնում, որ հայրենական պատերազմի մասնակիցների մահվան արդյունքում նվազում է զինծառայության հետ կապված կենսաթոշակ ստացողների թիվը:

Զինծառայության հետ կապված կենսաթոշակառուների գերակշիռ մասը տղամարդիկ են՝ մոտ 99 տոկոս: Այլ օրենքներով սահմանված կենսաթոշակառուները շատ փոքր թիվ են կազմում ընդհանուրի մեջ, որոնց մեջ ևս տղամարդիկ կազմում են գերակշիռ մաս:

2019թ. ամենաշատ կենսաթոշակառուները բնակվել են Երևանում՝ 172,501: Հատկանշական է, որ այս թիվը աճել է 2016թ. նկատմամբ՝ չնայած որ ընդհանուր թոշակառուների թիվը պակասել է: Առավել քիչ կենսաթոշակառու է բնակվել Վայոց ձորում՝ 9263: Կանանց մասնաբաժինը ընդհանուրի մեջ ամենաբարձրը եղել է Լոռվա մարզում՝ 62.8 տոկոս, իսկ ամենաքիչը Վայոց ձորում՝ 58.7 տոկոս:

Ուսումնասիրելով զինծառայության հետ կապված կենսաթոշակառուների թվաքանակը ըստ մարզերի՝ նկատում ենք, որ այս դեպքում ևս ամենաշատ կենսաթոշակառուները բնակվում են Երևանում՝ 2019թ. ընդամենը 422 մարդ: Սակայն եթե ընդհանուր թոշակառուների մեջ Երևանում բնակվողների թիվը տոկոսային հարաբերակցությամբ կազմում էր մոտ 37 տոկոս, ապա զինծառայության հետ կապվածների մեջ՝ 23 տոկոս: Երևանից հետո զինծառայության հետ կապված ամենաշատ կենսաթոշակառուները բնակվում են Գեղարքունիքի մարզում՝ ընդամենը 15.8%, իսկ ամենաքիչը՝ Վայոց ձորում՝ ընդամենը 3.3%:

Այս խմբի մեջ չափազանց քիչ է կանանց թիվը: Այն կտրուկ նվազել է 2014թ. հետո և վերջին տարիներին շատ մարզերում նույնիսկ ոչ մի կին կենսաթոշակառու չի բնակվում:Եթե 2014թ. կանանց թիվը կազմում էր 1896 մարդ, ապա 2019թ. հուլիսի դրությամբ այդ թիվը կազմել է ընդամենը 9 մարդ: Այս փոքր թիվը կապված է նրա հետ, որ ՀՀ զինված ուժերում շատ քիչ են եղել կանայք, ովքեր ծառայել են զինված ուժերում անհրաժեշտ քանակությամբ տարիներ: Վերջին տարիներին շատացել են կին ծառայողները, ուստի առնվազն տասը տարի հետո զինծառայության հետ կապված թոշակառուների թիվը մի փոքր կբարձրանա:

Հաջորդիվ ուսումնասիրենք կենսաթոշակառուների քանակը ըստ սեռատարիքային խմբերի: 2010թ. կենսաթոշակառուների մեծ մասը եղել է 63-70 տարեկան՝ 125,023 մարդ,

Աղյուսակ 1. ՀՀ կենսաթոշակառուների թվաքանակը և կառուցվածքը

	Կենսաթոշակառուների թվաքանակը			Աշխատանքային			Զինծառայության հետ կապված			Այլ օրենքներով սահմանված		
	Ընդ.	Կն.	Տղ.	Ընդ.	Կն.	Տղ.	Ընդ.	Կն.	Տղ.	Ընդ.	Կն.	Տղ.
2014	463145	283127	180018	458569	281231	177338	4576	1896	2680	-	-	-
2015	465802	283887	181915	463471	283862	179609	2331	25	2306	-	-	-
2016	468528	285151	183377	466170	285098	181072	2159	18	2141	199	35	164
2017	458194	278826	179368	455609	278745	176864	1984	15	1969	601	66	535
2018	463072	281288	181784	460548	281206	179342	1866	12	1854	658	70	588
2019	465199	282198	183001	462706	282119	180587	1811	9	1802	682	70	612

Աղբյուր՝ ՀՀ ՎԿ[1, 2, 3]

Աղյուսակ 2. ՀՀ կենսաթոշակառուների թվաքանակը ըստ մարզերի

	Ընդամենը					**Կանայք, %**			
	2008	2014	2016	2018	2019	2014	2016	2018	2019
ք.Երևան	179,546	166,920	170,069	171,398	172,501	61.9	61.8	62.1	62.1
Արագածոտն	22,636	18,552	18,787	18,566	18,651	59.8	59.3	59.0	58.7
Արարատ	41,769	36,252	37,097	35,779	35,972	60.1	59.6	58.6	58.3
Արմավիր	39,216	33,273	33,946	33,474	33,716	60.0	59.1	58.8	58.6
Գեղարքունիք	37,281	31,477	31,697	31,266	31,272	59.3	59.0	58.9	58.7
Լոռի	52,998	45,395	45,526	43,536	43,583	62.9	62.7	62.6	62.5
Կոտայք	38,941	35,117	36,113	36,902	37,253	59.0	58.8	58.5	58.4
Շիրակ	49,514	41,300	40,967	39,521	39,562	62.9	62.6	62.5	62.4
Սյունիք	25,750	23,385	23,312	22,669	22,760	59.5	58.8	58.6	58.5
Վայոց ձոր	10,433	9,497	9,554	9,217	9,263	60.1	59.5	58.7	58.2
Տավուշ	25,755	21,977	21,460	20,744	20,666	61.3	61.1	61.2	61.3
Ընդամենը ՀՀ	**523,839**	**463,145**	**468,528**	**463,072**	**465,199**	**61.1**	**60.9**	**60.7**	**60.7**

Աղբյուր՝ ՀՀ ՎԿ [**1**; **2**; **3**] և հեղինակի հաշվարկներ

իսկ ամենաքիչը 51-55 տարեկան՝ 27,398 մարդ: Կանանց դեպքում ևս ամենաքիչը եղել են 51-55 տարեկան կենսաթոշակառուները՝ 32,230 մարդ, իսկ ամենաշատը՝ 63-70 տարեկանները՝ 74,765 մարդ: Վերջին տարիների առնվազն երկու անգամ փոփոխվել է կենսաթոշակառուների քանակը սեռատարիքային խմբերի մեջ: Օրինակ 2014թ.՝ 2012թ. համեմատ, մոտ երեք անգամ նվազել է մինչև 51 տարեկան կենսաթոշակառուների թիվը՝ կազմելով 23,241 մարդ (որը այսպիսով դառձավ ամենափոքր խումբը)՝ 70,178-ի փոխարեն, փոխարենը մեծացել է 63-70 տարեկանների թիվը՝ կազմելով 147,514՝ 123,337-ի փոխարեն: 2018թ.՝ 2016թ. համեմատ ևս էական փոփոխություններ կան. այս անգամ ևս նվազել է մինչև 51 տարեկան կենսաթոշակառուների թիվը, սակայն կտրուկ նվազել է նաև 51-55 տարեկանների թիվը կազմելով համապատասխանաբար 14,594 և 13,196 նախկինում 20,037 և 20,409-ի փոխարեն: Այսպիսով 2018թ. ամենաշատ կենսաթոշակառուները եղել են նորից 63-70 տարեկանների խմբում, իսկ ամենաքիչը 51-55 տարեկանների խմբում:

Կանանց դեպքում ևս պատկերը նույնն է, սակայն պետք է նկատել, որ եթե 2010թ. կանայք միչև 51 տարեկանների մեջ կազմում էին ընդամենը 42.7%, ապա 2018թ. նրանց թիվը կազմել է 49.5%: Փոխարենը կրճատվել է 51-55 տարեկանների մասնաբաժինը՝ կազմելով 52.6%՝ նախկինում 56.88%-ի փոխարեն:

Այժմ ուսումնասիրենք ՀՀ-ում կենսաթոշակների միջին չափը ըստ կենսաթոշակների տեսակների, ըստ մարզերի, սեռի և այլ ցուցանիշների:

Ինչպես ներկայացված է գծապատկեր 1-ում՝ կենսաթոշակի միջին չափն աճել է վերջին հինգ տարում. 2014թ. 35813 դրամի փոխարեն 2019թ. կազմել է 40519.4 դրամ, իսկ 2008-ի համեմատ միջին կենսաթոշակը աճել է 1.9

Աղյուսակ 3. ՀՀ զինծառայության հետ կապված կենսաթոշակառուների թվաքանակը ըստ մարզերի

	Ընդամենը						նրանցից՝ կանայք			
	2008	**2014**	**2016**	**2018**	**2019**	**2019, %**	**2014**	**2016**	**2018**	**2019**
ք.Երևան	2,736	1,172	495	433	422	23.3	547	4	3	3
Արագածոտն	460	219	119	111	108	6.0	66	-	-	-
Արարատ	755	370	204	186	178	9.8	126	-	-	-
Արմավիր	620	291	177	151	143	7.9	73	6	5	3
Գեղարքունիք	1,184	621	339	293	287	15.8	203	-	-	-
Լոռի	1,114	442	172	148	150	8.3	226	-	-	-
Կոտայք	841	330	136	105	101	5.6	141	1	-	-
Շիրակ	991	421	241	208	201	11.1	163	4	4	3
Սյունիք	634	267	93	77	73	4.0	149	2	-	-
Վայոց ձոր	311	149	73	63	60	3.3	63	-	-	-
Տավուշ	779	294	110	91	88	4.9	139	1	-	-
Ընդամենը ՀՀ	**10,425**	**4,576**	**2,159**	**1,866**	**1,811**	**100.0**	**1,896**	**18**	**12**	**9**

Աղբյուր՝ ՀՀ ՎԿ [**1**; **2**; **3**] և հեղինակի հաշվարկներ

Աղյուսակ 4. ՀՀ կենսաթոշակառուների թվաքանակը ըստ սեռատարիքային խմբերի

Տարիքը	Ընդամենը					Նրանցից կանայք				
	2010	**2012**	**2014**	**2016**	**2018**	**2010**	**2012**	**2014**	**2016**	**2018**
Մինչև 51 տ.	75,391	70,178	23,241	20,037	14,594	32,230	29 701	12,153	10,266	7,228
51 – 55 տ.	27,398	28 519	23,606	20,409	13,196	15,586	16 055	12,782	10,940	6,940
56 – 62 տ.	61,512	62 835	61,634	63,164	52,306	41,013	39 689	38,409	38,374	31,380
63 – 70 տ.	125,023	123 337	147,514	177,821	194,716	74,765	73 432	87,248	105,006	113,903
71 – 75 տ.	106,520	98 650	71,548	48,193	55,632	65,378	60 925	44,156	29,765	34,408
76 – 80 տ.	66,106	53 951	64,353	64,403	51,317	40,836	33 518	40,682	41,358	32,990
81 և բարձր	58,307	70 601	71,249	74,501	81,311	40,317	47 333	47,697	49,442	54,439
Ընդամենը	**520,257**	**508,071**	**463,145**	**468,528**	**463,072**	**310,125**	**300 653**	**283,127**	**285,151**	**281,288**

Աղբյուր՝ ՀՀ ՎԿ[**1**; **2**; **3**]

անգամ: Նկատում ենք նաև, որ տղամարդկանց մոտ միջին կենսաթոշակը ավելի բարձր է քան կանանց մոտ: Տղամարդկանց միջին կենսաթոշակը կազմել է 42532.7 դրամ, իսկ կանանց միջին կենսաթոշակը՝ 39213.8 դրամ: 2019թ. հունվարի 1-ից արդեն իսկ բարձրացվել են ծերության, հաշմանդամության և կերակրողին կորցնելու դեպքում տրվող նպաստների չափերը և սահմանվել են 25500 դրամի չափով: Ինչպես նաև ՀՀ կառավարությունը որոշում է կայացրել սահմանել նվազագույն կենսաթոշակը 25500 դրամի չափով, այսինքն՝ բոլոր այն քաղաքացիներին, ում կենսաթոշակը ավելի ցածր է քան նվազագույն կենսաթոշակը, կտրամադրվի նվազագույն կենսաթոշակի չափ գումար [**5**]:

Աղյուսակ 5-ում ներկայացված են աշխատանքային կենսաթոշակի միջին չափը ըստ մարզերի և ըստ սեռի: Այսպիսով, ինչպես ընդհանրացված կենսաթոշակի դեպքում, աշխատանքային կենսաթոշակի դեպքում ևս տղամարդկանց միջին կենսաթոշակը ավելի բարձր է քան կանանցը: Միջին ամենաբարձր կենսաթոշակը Սյունիքի մարզում է 42552 դրամ, իսկ

Գծապատկեր 1. ՀՀ կենսաթոշակի միջին չափն ըստ սեռի, 2014-19թթ.



Աղբյուր՝ ՀՀ ՎԿ[**1**; **2**; **3**] և հեղինակի հաշվարկներ

Աղյուսակ 5. ՀՀ աշխատանքային կենսաթոշակի միջին չափն ըստ մարզերի և ըստ սեռի

ՀՀ մարզերը	ընդամենը				կանայք			տղամարդիկ		
	2014	**2016**	**2018**	**2019**	**2014**	**2016**	**2019**	**2014**	**2016**	**2019**
ք.Երևան	38,013	42,716	42,495	42,499	36,245	40,966	40,959	40,897	45,575	45,053
Արագածոտն	34,493	38,729	38,363	38,366	33,557	37,821	37,715	35,903	40,075	39,307
Արարատ	33,730	37,672	37,411	37,439	32,734	36,772	36,765	35,245	39,020	38,392
Արմավիր	33,959	38,070	37,743	37,785	33,107	37,359	37,367	35,252	39,110	38,383
Գեղարքունիք	34,110	38,211	37,904	37,954	32,806	36,920	36,905	36,052	40,123	39,484
Լոռի	34,847	38,862	38,597	38,629	33,929	38,046	38,020	36,411	40,251	39,654
Կոտայք	34,624	38,923	38,629	38,641	33,330	37,631	37,523	36,501	40,785	40,221
Շիրակ	34,710	38,931	38,746	38,790	34,001	38,351	38,451	35,928	39,918	39,360
Սյունիք	38,028	42,651	42,475	42,552	36,301	40,975	41,076	40,566	45,071	44,653
Վայոց ձոր	35,760	39,889	39,672	39,721	34,305	38,535	38,645	37,972	41,922	41,246
Տավուշ	36,321	40,389	39,852	39,833	35,608	39,879	39,587	37,458	41,201	40,228
Ընդամենը ՀՀ	**35,996**	**40,353**	**40,114**	**40,137**	**34,703**	**39,124**	**39,138**	**38,047**	**42,286**	**41,699**

Աղբյուր՝ ՀՀ ՎԿ[**1**; **2**; **3**]

ամենացածրը՝ Արմավիրի մարզում՝ 37785 դրամ:

Տղամարդկանց դեպքում ամենաբարձրը Երևանում է՝ 45053 դրամ, իսկ ամենացածրը Արարատի մարզում՝ 38392 դրամ: Կանանց դեպքում կենսաթոշակի ամենաբարձր միջին չափը Սյունիքում է՝ 41076 դրամ, իսկ ամենացածրը Արարատի մարզում՝ 36765 դրամ: Արարատի մարզում կենսաթոշակների միջին չափի ցածր լինելը կապված է նաև այն հանգամանքի հետ, որ այս մարզում շատ են գյուղատնտեսությամբ զբաղվողները, որը որպես աշխատանքային ստաժ չի գրանցվում և հետագայում ազդում է կենսաթոշակի չափի վրա:

Աղյուսակ 6-ում ներկայացված են զինծառայության հետ կապված կենսաթոշակների միջին չափը ըստ մարզերի և ըստ սեռի: Նկատում ենք, որ այս կենսաթոշակի չափը էականորեն ցածր է աշխատանքային կենսաթոշակի չափից. 2019թ. մոտ 1.6 անգամ ավելի ցածր է եղել, քան աշխատանքայինը: Նկատենք, որ 2019թ.՝ 2014թ. համեմատ, գրեթե 50% տոկոսով աճել է զինծառայության հետ կապված միջին կենսաթոշակը: Այս կենսաթոշակի դեպքում՝ չկա մեծ տարբերություն ինչպես մարզերի, այնպես էլ կանանց և տղամարդկանց կենսաթոշակների չափի մեջ: Օրինակ 2019թ. միջին կենսաթոշակը ամենաբարձրը եղել է Տավու-

շում՝ 27244 դրամ, իսկ ամենացածրը՝ Արմավիրում՝ 26108 դրամ:

Աղյուսակ 6. ՀՀ զինծառայության հետ կապված կենսաթոշակների միջին չափն ըստ մարզերի և սեռի

ՀՀ մարզեր	Ընդամենը				Կանայք			Տղամարդիկ		
	2014	**2016**	**2018**	**2019**	**2014**	**2016**	**2019**	**2016**	**2019**	**2019**
ք.Երևան	16,959	24,915	24,811	26,992	11,862	26,000	26,000	26,000	26,000	26,999
Արագածոտն	18,276	24,000	23,550	26,199	11,600	-	-	-	-	26,199
Արարատ	17,851	24,452	24,291	26,250	11,600	-	-	-	-	26,250
Արմավիր	18,421	23,537	23,576	26,108	12,501	23,333	25,833	23,333	25,833	26,114
Գեղարքունիք	18,966	25,280	24,894	26,659	11,600	-	-	-	-	26,659
Լոռի	16,114	23,866	23,838	26,363	11,702	-	-	-	-	26,363
Կոտայք	16,867	23,785	23,150	26,371	11,845	26,000	-	26,000	-	26,371
Շիրակ	18,365	25,154	25,106	26,458	12,023	26,000	26,000	26,000	26,000	26,465
Սյունիք	15,976	24,774	24,675	26,562	11,754	26,000	-	26,000	-	26,562
Վայոց ձոր	17,459	24,986	24,794	26,233	11,600	-	-	-	-	26,233
Տավուշ	17,068	25,799	25,515	27,244	11,683	26,000	-	26,000	-	27,244
Ընդամենը ՀՀ	**17,467**	**24,678**	**24,488**	**26,573**	**11,795**	**25,111**	**25,944**	**25,111**	**25,944**	**26,576**

Աղբյուր՝ ՀՀ ՎԿ[**1**; **2**; **3**]

Աղյուսակ 7. ՀՀ օրենքով սահմանված այլ կենսաթոշակների միջին չափը ըստ մարզերի և սեռի

ՀՀ մարզեր	ընդամենը			կանայք			տղամարդ		
	2016	**2018**	**2019**	**2016**	**2018**	**2019**	**2016**	**2018**	**2019**
ք.Երևան	345,627	360,978	354,978	379,806	365,654	357,904	336,580	360,263	354,551
Արագածոտն	346,667	303,034	298,694	440,000	440,000	440,000	300,000	291,620	285,848
Արարատ	185,700	280,639	276,037	253,000	153,560	153,560	140,833	294,759	288,929
Արմավիր	261,737	279,652	279,652	546,946	300,000	300,000	166,667	278,199	278,199
Գեղարքունիք	223,509	287,616	281,539	-	-	-	223,509	287,616	281,539
Լոռի	237,667	289,472	288,987	300,000	238,200	238,200	206,500	293,270	292,489
Կոտայք	234,486	303,880	306,472	-	-	-	234,486	303,880	306,472
Շիրակ	308,584	320,030	319,773	375,100	369,284	374,889	305,083	315,926	315,450
Սյունիք	243,456	307,300	307,300	165,000	165,000	165,000	259,147	315,671	315,671
Վայոց ձոր	259,069	294,354	303,074	-	-	-	259,069	294,354	303,074
Տավուշ	165,000	260,587	260,587	-	-	-	165,000	260,587	260,587
Ընդամենը ՀՀ	**314,851**	**340,818**	**336,768**	**375,278**	**353,418**	**347,206**	**301,955**	**339,318**	**335,574**

Աղբյուր՝ ՀՀ ՎԿ[**1**; **2**; **3**]

Քանի որ կանանց թիվը չափազանց փոքր է այս կենսաթոշակի դեպքում, այդ պատճառով էլ միջին կենսաթոշակի ձևավորման վրա հիմնականում ազդում է տղամարդկանց կենսաթոշակի չափը: Միայն նշենք, որ 2014թ. կանանց միջին կենսաթոշակը կազմել է 11795 դրամ, իսկ 2019թ. այն կազմել է 25944 դրամ: Տղամարդկանց կենսաթոշակը ևս աճել է 2014թ. նկատմամբ և 2019թ. կազմել 26576 դրամ 17467 դրամի փոխարեն:

Ճիշտ է, չափազանց փոքր է օրենքով սահմանված այլ կենսաթոշակառուների թիվը, սակայն բավականին բարձր է միջին կենսաթոշակների չափը: Օրինակ 2019թ. կենսաթոշակի միջին չափը ՀՀ-ում կազմել է 336,768 դրամ, ամենաբարձրը եղել է Երևանում՝ 354,978, իսկ ամենացածրը Տավուշում՝ 260,587 դրամ(տե՛ս աղյուսակ 7):

Կանանց դեպքում կենսաթոշակի չափը ամենաբարձրը եղել է Երևանում՝ 357,904, իսկ ամենացածրը՝ 165,000 դրամ Սյունիքի մար-

զում: Տղամարդկանց դեպքում կրկին ամենաբարձրը եղել է Երևանում՝ 354,551, իսկ ամենացածրը Տավուշում՝ 260,587 դրամ:

Այսպիսով, ուսումնասիրելով ՀՀ կենսաթոշակառուների թիվը և կենսաթոշակի միջին չափը, պարզեցինք, որ կենսաթոշակառուների թիվը վերջին տասնամյակում էականորեն նվազել է և 2019թ. կազմել է 465,199 մարդ՝ 2008-ի 523,839 փոխարեն: Կենսաթոշակառուների մեջ մոտ 99 տոկոսը աշխատանքային կենսաթոշակառուներն են: Կենսաթոշակառուների ընդհանուր թվի մեջ կանայք կազմել են վերջին տարիներին մոտ 60%, զինծառայության հետ կապված կենսաթոշակառուների գերակշիռ մասը տղամարդիկ են՝ մոտ 99 տոկոս: Այլ օրենքներով սահմանված կենսաթոշակառուները շատ փոքր թիվ են կազմում ընդհանուրի մեջ, որոնց մեջ ևս տղամարդիկ կազմում են գերակշիռ մաս: Ինչպես ընդհանրացված կենսաթոշակի դեպքում, աշխատանքային կենսաթոշակի դեպքում ևս տղամարդկանց միջին կենսաթոշակը ավելի բարձր է քան կանանցը: Միջին ամենաբարձր կենսաթոշակը Սյունիքի մարզում է 42552 դրամ, իսկ ամենացածրը՝ Արմավիրի մարզում՝ 37785 դրամ: 2019թ. հուլիսի 1-ի դրությամբ զինծառայության հետ կապված միջին կենսաթոշակը ամենաբարձրը եղել է Տավուշում՝ 27244 դրամ, իսկ ամենացածրը՝ Արմավիրում՝ 26108 դրամ: 2018թ. ամենաշատ կենսաթոշակառուները եղել են 63-70 տարեկանների խմբում՝ 194,716 թոշակառու, իսկ ամենաքիչը 51-55 տարեկանների խմբում՝ 13,196 թոշակառու:

Օգտագործված գրականության ցանկ

1. ՀՀ ՎԿ, «ՀՀ սոցիալական վիճակը 2018թ.», վիճակագրական ժողովածու, Երևան, 2019թ.,
2. ՀՀ ՎԿ, «ՀՀ սոցիալական վիճակը 2013թ.», վիճակագրական ժողովածու, Երևան, 2014թ.,
3. ՀՀ ՎԿ, «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2019 թվականի հունվար-հունիսին», տեղեկատվական ամսական զեկույց, Երևան, 2019թ.,
4. ՀՀ օրենքը «Պետական կենսաթոշակների մասին»՝ ընդունված 2010թ. դեկտեմբերի 22-ին
5. ՀՀ կառավարության 25 Ապրիլի 2019, 472–Ն որոշում 2010թ. դեկտեմբերի 30-ի N 1734-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին

Օգտագործված ինտերնետային կայքեր

6. http://armstat.am/am/
7. https://www.arlis.am/

Сдана/Հանձնվել է՝ 04.11.2019
Рецензирована/Գրախոսվել է՝ 11.11.2019
Принята/Ընդունվել է՝ 15.11.2019